

## Հայտարարություն

### Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն հայտարարում է մրցույթ՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) հայտարարում է արտաքին մրցույթ՝ **Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիրը՝ 22-4-23.5-Մ2-1)** քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիրը՝ 22-4-23.5-Մ2-1) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակին կարող եք ծանոթանալ [այստեղ](#):

Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիրը՝ 22-4-23.5-Մ2-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները պետք է անձամբ Կոմիտեի անձնակազմի կառավարման բաժին (ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան) ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (ձևը լրացվում է տեղում),
2. անձնագիր և/կամ նույնականացման քարտ՝ պատճեններով (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանք կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանք՝ պատճեններով),
3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,
5. արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ՝ պատճենով կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական՝ պատճենով,
6. մեկ լուսանկար՝ 3x4 չափսի:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2020 թվականի սեպտեմբերի 30-ից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 9-ը ներառյալ՝ աշխատանքային օրերին: Դիմումները յուրաքանչյուր աշխատանքային օր ընդունվում են ժամը 10:00-ից 12:30-ը և 14:30-ից 17:00-ը:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2020 թվականի նոյեմբերի 2-ին՝ ժամը 10:00-ին, Կոմիտեի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, «Զվարթնոց» օդանավակայան):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2020 թվականի նոյեմբերի 4-ին՝ ժամը 10:00-ին, Կոմիտեի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, «Զվարթնոց» օդանավակայան):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի «Հարցարան» ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը 212 309 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը) ՀՀ դրամ է:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

- **Սահմանադրություն.** հոդվածներ՝ 1, 3, 4, 10, 12, 17, 89, 90, 109, 124  
հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>
- **«Հանրային ծառայության մասին» օրենք.** հոդվածներ՝ 3, 4, 5, 6, 7, 8, 9, 15, 26, 27, 52  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=141524>
- **«Քաղաքացիական ծառայության մասին» օրենք.** հոդվածներ՝ 4, 6, 9, 10, 12, 18, 20, 21, 24, 30, 33, 38, 39  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138910>
- **«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք.** հոդվածներ՝ 2, 34, 35  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137754>
- **«Ավիացիայի մասին» օրենք.** հոդվածներ՝ 1, 2, 3, 6, 12, 14, 35, 36, 37, 38, 45, 51, 52, 53, 57  
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137070>

- **Ինֆորմատիկա 7-րդ դասարան:** Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ.Աղգաշյան: Երևան 2012, էջեր 10, 11, 22, 30, 31, 44, 46, 81

հղումը՝ <http://fliphtml5.com/fumf/egdx>

- **«Գրավոր խոսք», ուսումնական ձեռնարկ, Վազգեն Գաբրիելյան,** երրորդ լրամշակված հրատարակություն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012թ., էջեր՝ 64, 71, 73, 74, 93, 94, 96, 106, 108

հղումը՝ <http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf>

Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ <https://www.gov.am/am/announcements/item/346/> հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից, մասնավորապես՝

- «Խնդրի լուծում»

Հղումը՝ [https://www.gov.am/u\\_files/file/Haytararutyunner/4.pdf](https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf)

- «Հաշվետվությունների մշակում»

Հղումը՝ [https://www.gov.am/u\\_files/file/Haytararutyunner/6.pdf](https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/6.pdf)

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Կոմիտեի անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, հեռախոսահամար՝ 060-43-42-63, էլեկտրոնային փոստի հասցե՝ [olga.mkhitaryan@gdca.am](mailto:olga.mkhitaryan@gdca.am)):